



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2017 թվականի հունիսին (վերլուծություն)

2017 թվականի հունիսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 15581 գործարք, որոնց քանակը 2017 թվականի մայիս ամսվա համեմատ նվազել է 0.8 %-ով, իսկ 2016 թվականի հունիսի համեմատ՝ աճել 5.1 %-ով:

2017 թվականի հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2017 թվականի հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2017 թվականի հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4480 օտարման գործարքի 73.5 %-ը կազմել է առուվաճառքը, 26.1 %-ը՝ նվիրատվությունը և 0.4 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքի քանակի 41.4 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 39.0 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2017 թվականի հունիսին, 2017 թվականի մայիսի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքն աճել է 0.7 %-ով, իսկ 2016 թվականի հունիսի համեմատ՝ 17.5 %-ով:

2017 թվականի հունիսին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 64.8 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2017 թվականի հունիսին, 2017 թվականի մայիսի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 0.2 %-ով, իսկ 2016 թվականի հունիսի համեմատ՝ աճել 26.1 %-ով:

2017 թվականի հունիսին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով.

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	հունիս 2016 թ.	հունիս 2017 թ.	մայիս 2017 թ.
<b>Կենտրոն</b>	428250	451500	450000
<b>Արաբկիր</b>	357300	341050	340000
<b>Քանաքեռ-Զեյթուն</b>	283100	268000	268000
<b>Նոր Նորք</b>	254200	230000	230000
<b>Ավան</b>	261700	248000	247600
<b>Էրեբունի</b>	252350	237000	237000
<b>Շենգավիթ</b>	257700	240000	240000
<b>Դավթաշեն</b>	276750	250000	250000
<b>Աջափնյակ</b>	251000	226250	226250
<b>Մալաթիա-Սեբաստիա</b>	244100	230000	230000
<b>Նուբարաշեն</b>	157350	156000	156000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2017 թվականի հունիսին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2017 թվականի մայիսի համեմատ՝ աճել է 0.1%-ով:

2017 թվականի հունիսին մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 371 բնակարան, որոնց քանակը 2017 թվականի մայիսի համեմատ աճել է 13.1 %-ով, իսկ 2016 թվականի հունիսի համեմատ՝ 19.3 %-ով:

2017 թվականի հունիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		հունիս 2016 թ.	հունիս 2017 թ.	մայիս 2017 թ.
Արագածոտն	Աշտարակ	116000	105000	105000
	Ապարան	57450	59000	59000
	Թալին	65850	62000	62000
Արարատ	Արտաշատ	96500	91000	91000
	Մասիս	115550	100000	98000
	Վեդի	100700	90000	90000
Արմավիր	Արարատ	75400	77850	77850
	Վաղարշապատ	154150	122000	125000
	Արմավիր	121200	92000	100000
Գեղարքունիք	Մեծամոր	87500	70000	80000
	Սևան	99200	80000	80000
	Գավառ	59800	53000	53000
	Մարտունի	107650	110000	109000
	Վարդենիս	44800	46100	46100
	Ճամբարակ	28700	28800	28800
Լոռի	Վանաձոր	88400	82000	86000
	Ստեփանավան	74500	68000	70000
	Սպիտակ	99800	89000	93000
	Ալավերդի	55000	50000	49000
	Տաշիր	47300	47400	47400
	Թումանյան	11000	11000	11000
	Շամլուղ	8000	8000	8000
	Ախթալա	20200	30000	20500
Կոտայք	Աբովյան	155100	148200	147000
	Նոր Հաճն	128600	120000	120000
	Բյուրեղավան	108150	92300	91000
	Եղվարդ	109400	106700	102000
	Հրազդան	63800	56000	58000
	Ծաղկաձոր	292500	288000	288000
	Չարենցավան	85500	73000	73000
Շիրակ	Գյումրի	109300	89000	91000
	Արթիկ	66700	67600	67600
	Մարալիկ	40700	42300	41150
Սյունիք	Գորիս	122000	123000	125500
	Կապան	92500	95000	96000
	Սիսիան	91150	89000	90000
	Մեղրի	80900	90000	86000
	Քաջարան	94650	98000	98000
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց ձոր	Վայք	95000	92000	92000
	Եղեգնաձոր	125500	120400	120000
	Ջերմուկ	112900	99000	99000
Տավուշ	Դիլիջան	113150	110000	100000
	Իջևան	118300	110500	110000
	Բերդ	60200	62000	60600
	Նոյեմբերյան	49900	51000	50600
	Այրում	31850	31900	31900

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2017 թվականի հունիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2017 թվականի մայիսի համեմատ համեմատ՝ մնացել է անփոփոխ:

2017 թվականի հունիսին հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տան 387 առուվաճառքի գործարք, այդ թվում՝ Երևան քաղաքում՝ 115 գործարք, մարզերում՝ 272 գործարք: 2017 թվականի հունիսին, 2017 թվականի մայիսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքի քանակն աճել է 1.6 %-ով, ընդ որում, Երևանում՝ նվազել 5.0 %-ով, իսկ մարզերում՝ աճել 4.6 %-ով: 2017 թվականի հունիսին 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 2.4 %-ով, ընդ որում, Երևանում՝ 12.8 %-ով, իսկ մարզերում՝ նվազել 1.5 %-ով:

2017 թվականի հունիսին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ<sup>2</sup> և տնամերձի 400.0 մ<sup>2</sup> միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ<sup>2</sup> մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը)։

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	հունիս 2016 թ.	հունիս 2017 թ.	մայիս 2017 թ.
Կենտրոն	476350	476000	476000
Արաբկիր	383200	380000	380000
Քանաքեռ-Զեյթուն	295000	283100	283100
Նորք-Մարաշ	319300	300000	300000
Ավան	270600	262000	262000
Էրեբունի	239750	234130	234130
Շենգավիթ	255000	230000	230000
Դավթաշեն	276100	268050	268050
Աջափնյակ	250100	240000	240000
Մալաթիա-Սեբաստիա	238100	234000	234000
Նուբարաշեն	150800	150000	150000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2017 թվականի հունիսին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1 մ<sup>2</sup> մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2017 թվականի մայիսի համեմատ՝ մնացել է անփոփոխ:

2017 թվականի հունիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ<sup>2</sup> և տնամերձի 1000.0 մ<sup>2</sup> միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ<sup>2</sup> մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը)։

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		հունիս 2016 թ.	հունիս 2017 թ.	մայիս 2017 թ.
Արագածոտն	Աշտարակ	136250	130000	132000
	Ապարան	60050	51000	50000
	Թալին	69250	66000	66000
	Արտաշատ	100100	97000	97000

Արարատ	Մասիս	115100	110100	110100
	Վեդի	102300	90600	90600
	Արարատ	88000	88000	88000
Արմավիր	Վաղարշապատ	153150	149000	150050
	Արմավիր	107000	99950	102000
Գեղարքունիք	Սևան	94950	92950	92950
	Գավառ	57100	54100	54100
	Մարտունի	96200	95000	95000
	Վարդենիս	41150	41150	41150
	Ճամբարակ	31100	32000	31100
Լոռի	Վանաձոր	100900	98600	100000
	Ստեփանավան	91200	82800	85000
	Սպիտակ	114050	108000	110000
	Ալավերդի	50300	50500	50500
	Տաշիր	51900	45000	45000
	Թումանյան	12000	12000	12000
	Շամլուղ	14000	14000	14000
Կոտայք	Ախթալա	30000	30000	30000
	Աբովյան	157350	155200	155200
	Նոր Հաճն	129800	126000	126000
	Բյուրեղավան	120500	110000	110000
	Եղվարդ	116100	109000	109000
	Հրազդան	82600	71000	72000
	Ծաղկաձոր	305000	300000	300000
Շիրակ	Չարենցավան	83000	80000	80000
	Գյումրի	119250	116000	118200
	Արթիկ	63450	60400	60400
Սյունիք	Մարալիկ	52000	52000	52000
	Գորիս	130050	128000	128000
	Կապան	100750	100600	100600
	Սիսիան	96500	95000	95000
	Մեղրի	84650	88000	84000
Վայոց ձոր	Դաստակերտ	11610	11810	11810
	Վայք	90150	88100	88100
	Եղեգնաձոր	116750	114000	114000
Տավուշ	Ջերմուկ	131300	129000	129000
	Դիլիջան	115650	115000	111100
	Իջևան	123250	120200	120200
	Բերդ	60100	57000	57000
	Նոյեմբերյան	48300	48300	48300
	Այրում	36250	36250	36250

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2017 թվականի հունիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 մ<sup>2</sup> մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2017 թվականի մայիսի համեմատ՝ նվազել է 0.1%-ով:

Ընդհանուր առմամբ, 2017 թվականի հունիսին հանրապետությունում օտարվել է 1468 միավոր (1179.55 հա) հող, որից Երևանում՝ 101 միավոր (6.75 հա): Օտարված հողերն, ըստ նպատակային նշանակության, բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 878 միավոր (1055.42 հա), որից Երևանում՝ 16 միավոր (2.96 հա),
- բնակելի կառուցապատման հող՝ 410 միավոր (33.15 հա), որից Երևանում՝ 50 միավոր (1.98 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 132 միավոր (6.64 հա), որից Երևանում՝ 33 միավոր (1.69 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 18 միավոր (7.67 հա), որից Երևանում՝ 2 միավոր (0.12 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 18 միավոր (70.83 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 12 միավոր (5.84 հա) մակերեսով:

2017 թվականի հունիսին հանրապետությունում օտարված հողերից 1191 միավորի (1015.29 հա) նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 85 միավոր (4.81 հա), նվիրատվության գործարք՝ 273 միավորի (161.51 հա), որից Երևանում՝ 15 միավոր (1.93 հա) և փոխանակության գործարք՝ 4 միավորի (2.75 հա), որից Երևանում՝ 1 միավոր (0.01 հա):

Հանրապետությունում 2017 թվականի հունիսին, 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքի քանակն աճել է 18.3 %-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքի քանակն աճել է 20.2 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 16.4 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 2.0 անգամ: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 332.81 հա, որից 325.24 հա գյուղատնտեսական նշանակության:

Վաճառված հողերի քանակի 18.7 %-ը կամ 223 միավորը (107.85 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 25 միավոր (0.63 հա), իսկ 80.9 %-ը կամ 963 միավորը (907.43 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 60 միավոր (4.18 հա): 2017 թվականի հունիսին հանրապետությունում գրանցվել է կառուցապատման իրավունքի վաճառքի 5 գործարք (0.01 հա):

Ստորև ներկայացված է 2017 թվականի հունիսին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և կառուցապատման իրավունքի վաճառքները:

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապատ. հողեր						բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապատ. հողեր	
Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	
Երևան	0	0.00	0	0.00	14	0.40	11	0.24	12	1.71	2	0.12	28	1.24	18	1.10

Արագածոտն	6	23.49	1	0.01	1	0.03	4	0.02	55	201.68	0	0.00	24	2.74	1	0.34
Արարատ	7	19.29	1	0.12	5	0.43	4	0.22	88	46.58	0	0.00	53	4.37	8	0.18
Արմավիր	5	4.45	3	1.99	2	0.13	4	0.02	84	320.79	1	0.03	53	5.41	0	0.00
Գեղարքունիք	0	0.00	1	1.60	3	0.02	11	0.18	126	43.35	2	0.03	13	1.27	3	0.11
Լոռի	1	0.30	1	0.01	9	0.09	12	0.14	77	120.06	0	0.00	7	1.26	4	0.18
Կոտայք	7	6.81	0	0.00	16	0.43	8	0.88	128	63.10	2	0.28	55	4.52	8	0.53
Շիրակ	5	2.03	0	0.00	8	0.37	4	0.06	44	30.23	1	0.60	7	0.64	1	0.02
Սյունիք	0	0.00	1	0.10	6	0.32	4	0.08	18	14.38	0	0.00	3	0.24	0	0.00
Վայոց ձոր	23	28.67	0	0.00	1	0.07	5	0.06	11	31.22	0	0.00	3	0.35	1	0.01
Տավուշ	5	8.10	2	2.78	9	0.29	4	0.02	12	4.62	0	0.00	6	1.21	1	0.01
Ընդամենը	59	93.14	10	6.61	74	2.58	71	1.92	655	877.72	8	1.06	252	23.25	45	2.48

Ստորև ներկայացված է 2017 թվականի հունիսին պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը:

	Ուղղակի վաճառք								Վաճառք աճուրդով									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապ. հողեր								բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապ. հողեր	
Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	
Երևան	19	0.28	0	0.00	10	0.07	9	0.21	6	0.36	0	0.00	0	0.00	4	0.33	2	0.03
Արագածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	12	23.55	6	23.49	1	0.01	1	0.03	4	0.02
Արարատ	2	0.18	0	0.00	0	0.00	2	0.18	14	19.23	6	18.64	1	0.12	5	0.43	2	0.04
Արմավիր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	14	6.59	5	4.45	3	1.99	2	0.13	4	0.02
Գեղարքունիք	4	0.03	0	0.00	1	0.01	3	0.02	11	1.77	0	0.00	1	1.60	2	0.01	8	0.16
Լոռի	3	0.05	0	0.00	1	0.01	2	0.04	20	0.49	1	0.30	1	0.01	8	0.08	10	0.10
Կոտայք	7	0.15	0	0.00	6	0.13	1	0.02	24	7.97	7	6.81	0	0.00	10	0.30	7	0.86
Շիրակ	3	0.102	0	0.00	2	0.10	1	0.002	11	2.26	2	1.93	0	0.00	6	0.27	3	0.06
Սյունիք	1	0.003	0	0.00	0	0.00	1	0.003	10	0.50	0	0.00	1	0.10	6	0.32	3	0.08
Վայոց ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	29	28.80	23	28.67	0	0.00	1	0.07	5	0.06
Տավուշ	6	0.20	0	0.00	6	0.20	0	0.00	14	10.99	5	8.10	2	2.78	3	0.09	4	0.02
<b>Ընդամենը</b>	<b>45</b>	<b>0.995</b>	<b>0</b>	<b>0.00</b>	<b>26</b>	<b>0.52</b>	<b>19</b>	<b>0.475</b>	<b>165</b>	<b>102.51</b>	<b>55</b>	<b>92.39</b>	<b>10</b>	<b>6.61</b>	<b>48</b>	<b>2.06</b>	<b>52</b>	<b>1.45</b>

2017 թվականի հունիսին հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 4 գործարք (0.75 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2017 թվականի հունիսին, 2016 թվականի հունիսի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 3.4 %-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 45.5 %-ով, իսկ մարզերում՝ 0.6 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 19.1 %-ով, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ՝ 4.0 %-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 1.9 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 5.0 անգամ:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2017 թվականի հունիսին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին

գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (հա)	պայմանագրային գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (հա)	շուկայական գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	5	23.25	385.0	802.4	635.4	36	35.16	365.0	12000.0	3366.0
Ապարան	1	0.23	525.6	525.6	525.6			86.5	2727.3	635.1
Թալին						10	146.96	93.6	5494.5	680.0
Ծաղկահովիտ						5	18.18	79.5	1000.0	444.0
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	2	6.02	86.6	100.0	93.3	40	10.36	335.1	10833.3	2679.3
Մասիս	4	12.62	60.5	514.9	240.4	24	24.32	200.0	11904.8	3444.2
Վեդի						24	11.90	207.0	10795.1	2014.0
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր	2	0.22	84.5	935.8	510.2	42	21.81	294.3	9090.0	1475.0
Բաղրամյան	1	3.05	70.9	70.9	70.9	6	253.73	90.6	2561.1	815.0
Վաղարշապատ	2	1.17	171.1	2219.3	1195.2	33	12.81	444.4	11764.7	2060.0
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ						116	32.29	199.8	1875.0	531.5
Ճամբարակ								60.5	953.3	352.0
Մարտունի						3	1.26	51.1	2850.0	735.0
Սևան								52.2	2134.8	360.0
Վարդենիս						4	9.41	41.2	2575.1	355.5
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի						5	3.07	170.4	6424.2	538.5
Գուգարք						6	5.76	234.6	6065.9	815.0
Սպիտակ	1	0.30	163.5	163.5	163.5			250.0	5555.5	655.0
Ստեփանավան						3	1.68	90.6	1686.6	425.5
Տաշիր						59	102.96	45.3	1384.4	183.5
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	2	1.31	87.5	207.9	147.7	63	13.23	279.3	11942.7	3964.0
Եղվարդ	4	3.08	774.4	1363.1	1144.9	49	36.98	174.4	11971.8	2583.2
Հրազդան	1	2.42	825.0	825.0	825.0	15	10.16	130.5	10256.4	1100.0
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան	2	1.93	132.1	132.5	132.3	16	14.96	252.0	1693.1	713.0
Ամասիա								40.9	261.0	145.0
Անի						8	9.61	110.6	546.9	465.5
Աշոցք								58.5	215.8	142.0
Արթիկ						6	2.14	79.4	1428.6	560.0
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս						4	5.14	92.6	1023.2	700.0
Կապան						2	0.89	120.0	841.6	462.5
Մեղրի						3	1.70	193.0	3000.0	855.0
Սիսիան						5	4.65	46.3	1977.4	525.0
<b>Վայոց ձորի մարզ</b>										
Եղեգնաձոր	23	28.67	68.8	2050.6	1071.6	7	29.42	125.0	10000.0	1838.5
Վայք						2	1.23	58.8	1430.7	640.0
<b>Տավուշի մարզ</b>										
Բերդ						5	1.52	213.3	3783.8	725.0
Իջևան	5	8.10	363.0	2400.0	1272.6			267.5	9454.5	1680.0



Նոյեմբերյան						6	2.92	46.7	7368.4	1038.3
-------------	--	--	--	--	--	---	------	------	--------	--------

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կախված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2017 թվականի հունիսին բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1000.0 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ				
	Մրավորների քանակ	Մակերես (մ <sup>2</sup> )	պայմանագրային գները 1000.0 մ <sup>2</sup> մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Մրավորների քանակ	Մակերես (մ <sup>2</sup> )	շուկայական գները 1000.0 մ <sup>2</sup> մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Մասկվելագույն	Միջին			Նվազագույն	Մասկվելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	1	290.0	3088.9	3088.9	3088.9	18	18330.3	130.7	22200.0	2586.0
Ապարան						4	4950.0	124.1	609.6	389.1
Թային						2	4127.0	63.2	1454.8	152.5
Ծաղկահովիտ								60.0	214.3	95.0
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	4	3687.5	538.8	538.8	538.8	7	8109.3	173.9	7140.3	902.0
Մասիս	1	570.0	666.7	666.7	666.7	35	24257.7	187.5	25000.0	1202.0
Վեդի						11	11368.0	126.1	5000.0	663.5
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր						15	18090.0	131.6	9090.9	1216.0
Բաղրամյան						1	1200.0	100.0	833.3	240.0
Վաղարշապատ	2	1262.0	2014.5	7656.0	4835.3	36	33423.0	197.4	26528.4	1531.2
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ								186.6	1084.3	683.8
Ճամբարակ	1	28.2	369.3	369.3	369.3	1	2825.0	71.3	2286.2	147.0
Մարտունի						8	4449.0	119.3	5000.0	277.0
Սևան	1	33.8	1398.3	1398.3	1398.3			240.0	3110.4	350.0
Վարդենիս						3	4536.0	72.5	987.2	150.5
<b>Լոռու մարզ</b>										
Այվերդի	5	214.1	3150.0	3150.0	3150.0			114.3	1388.9	217.0
Գուգարք	3	592.7	2105.8	4750.5	3363.7	5	10006.0	77.9	14083.3	1259.0
Սպիտակ						2	2640.0	104.9	1348.3	198.3
Ստեփանավան								88.2	1666.7	176.0
Տաշիր								45.3	400.0	90.0
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	4	959.0	1543.5	4974.6	3085.9	30	24095.4	264.5	35353.5	1956.0
Եղվարդ	5	1728.9	1292.0	1941.1	1681.4	16	11473.3	173.6	27000.0	2849.0
Հրազդան	1	340.0	2201.9	2201.9	2201.9	6	5300.0	117.7	34848.5	1317.0
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան	6	2715.0	233.0	580.9	518.4	4	4206.9	113.6	18750.0	333.5
Ամասիա								45.3	274.7	72.0
Անի								67.9	180.6	218.0
Աշոցք								40.8	144.0	65.0
Արթիկ						3	2171.6	111.8	5000.0	216.8
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս								112.2	1700.0	369.0
Կապան	6	3151.9	54.5	2400.0	1075.0	2	1935.3	67.9	2638.9	380.0
Մեղրի								68.5	632.9	271.5
Սիսիան								123.5	875.0	263.0
<b>Վայոց ձորի մարզ</b>										

Եղեգնածոր	1	715.0	748.3	748.3	748.3	2	1710.0	96.7	7659.6	505.7
Վայք						1	1770.0	120.7	1448.3	250.0
Տավուշի մարզ										
Բերդ						1	770.0	75.8	810.0	131.0
Իջևան	3	907.7	581.2	3000.0	1670.0	5	11294.0	74.1	14423.1	475.5
Նոյեմբերյան								125.0	1948.1	259.0

2017 թվականի հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 596 վարձակալության գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 3.8 %-ը: Ընդ որում, վարձակալության գործարքի 90.9 %-ն իրականացվել է իրավաբանական անձանց կողմից:

2017 թվականի հունիսին, 2017 թվականի մայիսի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 19.1 %-ով, իսկ 2016 թվականի հունիսի համեմատ՝ 10.5 %-ով:

2017 թվականի հունիսին հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 22 բնակարանի, 27 անհատական բնակելի տան, 294 հասարակական և 69 արտադրական նշանակության օբյեկտի, 179 հողի և 5 ավտոտնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, սերվիտուտի և անհատույց օգտագործման իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2017 թվականի հունիսին հանրապետությունում վարձակալված 428.68 հա հողից 2.61 հա վարձակալվել է Երևանում: Մարզերում վարձակալված 426.07 հա հողերից 235.34 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 48.71 հա արդյունաբերական օբյեկտների, 0.12 հա հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հող վարձակալվել է Շիրակի մարզում՝ 159.26 հա, որից 15.69 հա գյուղատնտեսական նշանակության:

2017 թվականի հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2211 գրավադրման գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումների քանակի 14.2 %-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2017 թվականի մայիսի համեմատ, նվազել է 6.9 %-ով, իսկ 2016 թվականի հունիսի համեմատ՝ աճել 20.3 %-ով:

Գրավադրման գործարքն առավելապես իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (51.8 %), անհատական բնակելի տների (22.4 %), հասարակական նշանակության օբյեկտների (11.9 %) և հողերի (8.1%) նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1320 գրավադրման գործարքից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2017 թվականի մայիսի համեմատ նվազել է 7.6 %-ով, իսկ 2016 թվականի հունիսի համեմատ՝ աճել 29.0 %-ով:

2017 թվականի հունիսին հանրապետությունում գրավադրվել է 76.04 հա հող, որից 7.97 հա Երևանում: Ընդ որում, գրավադրված հողի 62.06 հա կամ 93.4 %-ը գյուղատնտեսական նշանակության: Առավել մեծ մակերեսով հող գրավադրվել է Արմավիրի մարզում՝ 25.19 հա, որից 24.91 հա գյուղատնտեսական նշանակության:

2017 թվականի հունիսին հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 224 գործարք: 2017 թվականի հունիսին հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2017 թվականի մայիսի համեմատ, աճել է 8.7 %-ով, իսկ 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ 37.4 %-ով:

Երևանում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 164 գործարք, որը 2017 թվականի մայիսի համեմատ, նվազել է 5.7 %-ով, իսկ 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ աճել 69.1 %-ով: Մարզերում հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2017 թվականի մայիսի համեմատ, աճել է 87.5 %-ով, իսկ 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել 9.1 %-ով:

2017 թվականի հունիսին հանրապետությունում արձանագրվել է 2041 առաջնային գրանցում, որոնց քանակը, 2017 թվականի մայիսի համեմատ, աճել է 7.3 %-ով, իսկ 2016 թվականի հունիսի համեմատ՝ 2.8 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումներում կազմել է 13.1 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում և Կոտայքի մարզում (18.0%):

**«Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե**